

ԱՂՆՋԱԶՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵՂ, ՊԱՅՄԱՆԱԿԱՆ
ՆՇԱՆՆԵՐ, ՄԱՍՇՏԱԲ, ՆՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ
ՆԿԱՐԱԳՐԵԼ ՋՐԱՅԻՆ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ
ՑԱՆՑԸ, ԲՈՒՍԱԿԱՆ ԾԱԾԿԻ ԵՎ ՌԵԼԵՖԻ
ՊԱՏԿԵՐՈՒՄԸ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ե. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ Փ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՂՆՋԱՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵՁ, ՊԱՅՄԱՆԱԿԱՆ
ՆՇԱՆՆԵՐ, ՄԱՍՇՏԱԲ, ՆՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ
ՆԿԱՐԱԳՐԵԼ ԶՐԱՅԻՆ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ
ՑԱՆՑԸ, ԲՈՒՍԱԿԱՆ ԾԱԾԿԻ ԵՎ ՌԵԼԵՖԻ
ՊԱՏԿԵՐՈՒՄԸ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ե. ՍՏԵՋԱՆՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ Փ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զինված ընդհարումների ժամանակ մարտական գործողություններ կազմակերպելու և առաջադրված մարտական խնդիրը կատարելու համար առանձնահատուկ տեղ է զբաղեցնում *տեղանքի մարտավարական հատկանիշների* ճիշտ օգտագործումը:

Առանց տեղանքի տարատեսակների, դրանց մարտավարական հատկանիշների իմացության, ինչպես նաև տեղանքում կողմնորոշվելու, տեղագրական քարտեզ կարդալու, հեռավորությունը որոշելու և տեղանքը գնահատելու կարողության հնարավոր չէ հաղթել ժամանակակից համազորային մարտում:

Բացի այդ՝ **ռազմական տեղագրության** ուսուցումը նպաստում է զինծառայողների մեջ այնպիսի կարևոր հատկությունների զարգացմանը, ինչպիսիք են դիտողականությունը, ճշգրտությունը, դիտարկումների արդյունքների և տեղանքի մարտավարական հատկանիշների վերլուծման ու գնահատման ունակությունը:

Զինված ուժերում ռազմական տեղագրությունը մարտական պատրաստության կարևոր առարկաներից մեկն է:

Տեղագրական քարտեզ

Տեղագրական քարտեզ կոչվում է երկրագնդի մակերեսի, նրա վրա գտնվող բոլոր օբյեկտների փոքրացրած, ճշգրիտ, մանրամասն պատկերումը թղթի վրա:

Քարտեզի վրա հնարավոր չէ տեղանքը տեղադրել բնական տեսքով, այն իրականացնում են փոքրացված ձևով՝ մասշտաբի օգնությամբ և պայմանական նշանների միջոցով:


Մասշտաբը թվային արտահայտություն է (պայմանական չափի), որը ցույց է տալիս, թե քարտեզի վրա պատկերված տարածքը քանի անգամ է փոքրացված իրական չափերից:

Մասշտաբը լինում է՝ թվային և գծային:

Թվային մասշտաբը գրվում է կոտորակի ձևով, համարիչը 1 է, իսկ հայտարարը՝ փոքրացման չափը ցույց տվող թիվը: Օրինակ՝ 1:100.000, նշանակում է, որ օբյեկտը (տարածքը) փոքրացված է 100.000 անգամ, այսինքն՝ քարտեզի վրա 1 սմ-ը համապատասխանում է բնության մեջ եղած 100.000 սմ-ին կամ 1 կմ-ին:

Գծային մասշտաբը տրվում է գծի ձևով: Գիծը բաժանված է 1 սմ-անոց հատվածների և յուրաքանչյուր հատվածի վրա գրված է թիվ: Թվային

մասշտաբում նշված օրինակի համար՝ 0, 1, 2, 3 և այլն: Դրանք ցույց են տալիս բնության մեջ համապատասխանող երկարությունը, այսինքն՝ քարտեզի վրա 1 սմ հա-



Գծային մասշտաբ

վասար է բնության մեջ 1 կմ, 2 սմ՝ 2 կմ, 3 սմ՝ 3 կմ և այսպես հաջորդաբար: Իսկ 1:50000 թվային մասշտաբ ունեցող քարտեզի վրա 1 սմ հավասար է 500 մ և, հետևաբար, 2 սմ՝ 1000 մ, 3 սմ՝ 1500 մ:

Գծային մասշտաբի վրա գրոն դրվում է ոչ թե ձախից, այլ մեկ բաժանք դեպի աջ: Այդ բաժանքը բաժանված է միլիմետրերի. քանոն չլինելու դեպքում այն օգտագործվում է փոքր հատվածներ չափելու համար:

Պեպր է նկատի ունենալ, որ երկու մասշտաբներից մեծ է այն, որի հայտարարն ավելի փոքր է, օրինակ 1:50.000 մասշտաբն ավելի մեծ է, քան 1:100.000: Առաջինի դեպքում քարտեզի վրա 1 սմ-ին համապատասխանում է 500 մ, իսկ երկրորդի դեպքում՝ 1 կմ:

Տեղագրական քարտեզի պայմանական նշանները: Տեղագրական քարտեզի վրա տեղանքը, տեղական առարկաները մանրամասն պատկերելու համար օգտագործվում են հատուկ պայմանանշաններ, որոնք հնարավորություն են տալիս կարդալ քարտեզը և լիարժեք պատկերացում կազմել տեղանքի մասին:

Պայմանական նշաններ են կոչվում քարտեզի վրա ըստ մասշտաբի պատկերված այն օբյեկտների, տարրերի ու առարկաների նշանները, որոնք իրենց արտաքին տեսքով մոտավորապես նման են տվյալ առարկային (օբյեկտին): Պայմանական նշանները բաժանվում են ըստ խմբերի (ճանապարհներ, երկաթգծեր, կամուրջներ, ինժեներական կառույցներ, բնակավայրեր, ջրային ցանց և այլն):

Պայմանական նշանների միջոցով արտահայտվում է քարտեզի բովանդակությունը: Տեղագրական քարտեզներում առանձնահատուկ է պայմանական նշանների գունային արտահայտությունը:

Կապույտ գույնով նշվում է ջրային ցանցը՝ ծով, լիճ, գետ, ջրանցք, ճահիճ, աղբյուր: Գետերի, ջրանցքների վրա նշվում է նրանց հոսքի թեքությունը, հոսքի արագությունը, լայնությունը, խորությունը, հունի ապարի կազմը և կարծրությունը: Ճահիճները ցուցադրվում են հորիզոնական գծիկներով, և ընդգծվում է անցանելիության աստիճանը (անցանելի, դժվարանցանելի, անանցանելի):

Կանաչ գույնով նշվում են անտառները, մրգատու, ցիտրուսային կամ տեխնիկական կուլտուրաների ու խաղողի այգիները, մարգագետինները, գյուղատնտեսական ցանքատարածությունները:

Շագանակագույնով նշվում են բլուրները, լեռները, դրանց բարձրությունը ցույց տվող կոր գծերը՝ հորիզոնականները:

Ռելիեֆի արտահայտված ձևերը տեղագրական քարտեզների վրա պատկերվում են հորիզոնականներով: Միևնույն բարձրություն ունեցող կետերը միացնող փակ կորը կոչվում է **հորիզոնական**: Տեղագրական քարտեզներում դրանք արտահայտված են շագանակագույնով:


Հորիզոնականները երբեք միմյանց հետ չեն հատվում: Հարթավայրային կամ բլրոտ տեղանքում դրանք տեղադրվում են միմյանցից բավականին հեռու, իսկ լեռնային վայրերում՝ շատ մոտիկ (կախված լանջերի թեքության աստիճանից):

Տեղագրական քարտեզներում հորիզոնականները դրվում են որոշակի կտրվածքով: Կտրվածքի չափը տրված է քարտեզի կոորդինատային ցանցի հարավային (ներքին) մասում: Տեղանքի բլրոտ կամ գոգավոր լի-

ները տեղագրական քարտեզի վրա արտահայտվում է հորիզոնականների վրա դրված գծիկների դիրքով: Գծիկը միշտ ուղղված է լանջի ցածր թեքության կողմը (գոգավորության դեպքում դրվում է ներսի կողմում):

Իմանալով պայմանական նշանները, մասշտաբը՝ մենք կարող ենք կարդալ տեղագրական քարտեզը, ստանալ սպառիչ տեղեկություններ մարտական գործողությունների տեղանքի մասին:

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



Բնակավայրեր 1:25000
և 1:50000 Մ
քարտեզների վրա



Հուշարձաններ,
կոթողներ



Բնակելի և ոչ բնակելի
կառույցներ



Եկեղեցիներ



Գործարանի
ծխնելույզ



Ռադիո և
հեռուստահաղորդման
կայմեր



Գործարաններ և
ֆաբրիկաներ



Օդանավակայաններ



Փորվածքներ
հորատանցքեր և
թունելներ



Գերեզմանոց



Էլեկտրակայաններ



Քարակույտ



Երկգիծ երկաթուղի
և կայան



Ավտոմայրուղի
8 մ - լայնություն,
2 - ուղիների քանակը,
Ա - ասֆալտ




Խճուղի



Սայլուղի



Դաշտային և
անտառային
ճանապարհներ



Արահեմներ և նեղ
կամուրջներ



Կապի գծեր



Էլեկտրահաղորդիչ
գծեր




Գետեր և վտակներ




Ջրանցքներ և
առուներ



Աղբյուրներ



Հիմնական
հորիզոնականներ




Հորիզոնականի
բարձրությունը 200 մ
և լանջի թեքության
ցուցիչը

• 2506,5

Բարձրության նիշ



Չափափ.
բարձրությունը 21 մ



Ջրագծի ցուցիչ



Սլաքը ցույց է տալիս
հոսանքի ուղղությունը

Գետի և ջրանցքի
բնութագիրը.
19.2 մ - լայնությունը,
1.2 մ - խորությունը,
< - հատակի բնույթը


Կամուրջ.
շինանյութ՝ բեթոն,
երկարությունը՝ 370 մ,
լայնությունը՝ 10 մ
բեռնափարողությունը՝
60 տ

Պարվար.
Հողե,
երկարություն 20.3 մ,
լայնություն 8 մ


Խառը անտառ.
20 մ ծառերի միջին
բարձրությամբ,
25 սմ ծառարնի
հաստությամբ, 5 մ
ծառերի միջև
հեռավորությամբ



Մրգատու այգիներ



Խաղողի այգիներ



Մարգագետին



Կողմնորոշիչի
նշանակություն
ունեցող մենավոր ծառ

Տեղագրական քարտեզը որպես մարտի կառավարման միջոց

Տեղագրական քարտեզները հրամանատարների, շտաբների կողմից օգտագործվում են բազմաբնույթ նպատակներով: Տեղագրական քարտեզի միջոցով կատարվում է տեղանքի ուսումնասիրում և գնահատում, կողմնորոշում տեղանքում, որոշվում են նշանակետը, դիրքը, կատարվում ինժեներատեխնիկական հաշվարկներ: Հրամանատարի աշխատանքային քարտեզը տեղագրական քարտեզ է, որտեղ հրամանատարը (կամ շտաբի սպան) պայմանական նշանների օգնությամբ ցույց է տալիս մարտավարական կամ հատուկ իրավիճակը և դրա փոփոխությունը մարտի ընթացքում: Աշխատանքային քարտեզի միջոցով հրամանատարն ուսումնասիրում և գնահատում է իրավիճակը, որոշում է ընդունում, ենթականերին տալիս է առաջադրանք, փոխօգնություն է կազմակերպում, տալիս է ցուցումներ, զեկուցում է մարտական գործողությունների ընթացքի մասին:

Ստորաբաժանումների հրամանատարներն աշխատում են 1:50000 կամ 1:100000 մասշտաբի տեղագրական քարտեզներով: Իսկ հատուկ առաջադրանքների համար (ջրային տարածքների հաղթահարման, խոշոր բնակավայրերում մարտի համար) օգտագործում են ավելի խոշոր մասշտաբի 1:10000 կամ 1:25000 տեղագրական քարտեզներ: Տեղագրական քարտեզները տրվում են ստորաբաժանումներին՝ շտաբների կողմից միջոցառման նախապատրաստման ընթացքում: